Շուշանիկ Գ. Զոհրաբյան (Փարիզ)
Արվեստագիտության թեկնածու

ՐԱՖՖԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Բանալի բառեր – Ռաֆֆի Սարգսյան, ազգային արմատներ, քանդակներ, աշխարհընկալում, գեղարվեստական լեզու, տառեր, արտահայտչալեզու, սիմվոլներ:

Նյութը ինքնատիպ է իր մեջ, ու միտքն այն ծնում է այնպես, ինչպես որ արվեստագետն է այն զգում: Վերջինս սնվում է իր ներաշխարհից, ազգային արմատներից և դրանց համադրելով մարդկության կենսապորձի իմաստավորած ըմբռնումը՝ խոսում համամարդկային իրողությունների, աշխարհի հետ մարդ–անհատի կապի մասին:

Ռաֆֆի Սարգսյանը ծնվել է Լիբանանում, 1967–1970 թվականներին գեղարվեստական սկզբնական կրթությունը ստացել Լիբանանի Գեղարվեստի ակադեմիայի քանդակի բաժնում, 1971–1975 թվականներին կատարելագործվել Փարիզի Գեղեցիկ արվեստների ազգային բարձրագույն դպրոցրում (École nationale supérieure des beaux–arts de Paris)՝ ավարտելով Սեզարի արվեստանոցը: Այս շրջանը քանդակագործի համար ստեղծագործական ինքնաճանաչման, կայացման շրջանն էր, երբ Ռաֆֆի Սարգսյանը ձևավորվում է որպես արվեստագետ, գտնում սեփական մտքերն ու ապրումներն արտահայտելու յուրովի կերպը, ավելի հստակ է դառնում նրա աշխարհընկալումը:

Ռաֆֆի Սարգսյանի արվեստն ըմբռնելու և ճիշտ իմաստավորելու համար առանցքային են նրա ազգային մտածողության և արտահայտչալեզվի հետ կապված խնդիրները: Զուտ ազգային թեմաներ շոշափող գործերից անկախ, քանդակագործի ստեղծագործության թե՛ ոճական և թե՛ գաղափարական էության ակնառու առանձահատկությունները բացահայտվում են իր արևելյան արմատներով: Այդ ներաշխարհի կենտրոնում Ռաֆֆի Սարգսյանի մտորումներն են մարդ արարածի, նրա էության ու ճակատագրի մասին, մասնավորապես ազգային պատկանելության, հայրենի ժողովրդի պատմական անցյալի հետ օրգանական, կենդանի կապի սուր գիտակցումը:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 28.11.12:

Ինչպես նա ինքն է նշում, «Ծանիր զքեզ»: Դա մարդու էության, բնույթի, նրա կյանքի իմաստի ու նպատակի ճանաչման կոչ է: Եվ իր աշխատանքների անվանումներն արդեն հուշում են դրանցում ներդրված մտքերի ու հույզերի էությունը:

Սարգսյանի ստեղծագործության ողջ հյուսվածքի միջով անցնող առանցքային թեմաներ կան. անհատ և հասարակություն, մարդ և բնություն, հայոց Մեծ եղեռն: Քանդակագործի գործերում շատ վաղ ի հայտ եկավ նրա հետագա ողջ ստեղծագործությանը բնորոշ հատկությունը՝ խոսել արվեստի միջոցով՝ սիմվոլների օգնությամբ, իր նախնիների, արմատների և մշակույթի մեջ փնտրելով ոգեշնչող սիմվոլները: Նա ասես անընդհատ վերադառնում է անցյալում արված աշխատանքներին՝ կրկին ու կրկին վերափոխելով դրանք և փորձելով այդ անվերջ երկխոսության վերջակետը դնել: Ասես արվեստագետի մտահղացումները բյուրեղանում են և ավարտուն տեսք ստանում բազմաթիվ տարբերակների կատարման ընթացքում: Նույն թեմայով ու նույն վերնագիրն ունեցող աշխատանքների մի քանի տարբերակներ է նա ստեղծել («Մշակույթի արմատները», «Պատմագրություն», «Սկիզբ», «Բաղեղի երկխոսություն», «Երկիր և մշակույթ», «Նոթատետր», «Մեծ գիրքը», «Բանաստեղծների պարտեզ», «Տառերով ծառ», «Ձյուղով տղամարդը», «Քաղաքի ոդիսականը», «Զորս եղանակ», «Էմանսիպացիա», «Քամանչաներ», «Անահիտ աստվածուհի», «Գրիգոր Նարեկացի», «Կոմիտաս», «Սայաթ–Նովայից Կոմիտաս» և այլն):

Պատմագրություն

Սկիզբ

Երկիր և մշակույթ

Տառերով ծառ

Ձյուղերով տղամարդը

Քաղաքի ոդիսականը

Զորս եղանակ

Կոմիտաս

Բրոնզից պատրաստված այս քանդակները բացահայտում են խիստ հոգևոր և զգացական խորություն: Ծառերի ճյուղեր, բույսեր, արմատներ, տերևներ, տառեր՝ հեղինակի կերտած քանդակներում հաճախ կիրառվող հատկանշական տարրեր, սիմվոլներ, որոնք օժանդակում են կերպարի բացահայտմանը՝ կազմելով նրա գեղարվեստական լեզվի անբաժան մասը: Գիրը Սարգսյանի արվեստում ուրույն տեղ է գրավում: Ինչպես ժամանակին Մեսրոպ Մաշտոցը հին նշանագրերով վերականգնեց կապը հայ հնամյա մշակույթի հետ՝ նախապես կորսվածը վերագտնելու նպատակով, Րաֆֆի Սարգսյան արվեստագետը նույնպես իր քանդակներում հայկական տառերի միջոցով ասես փորձում է վերագտնել, հաղորդակցվել կամ մեզ հաղորդակից դարձնել անցյալի գրավոր պատմությանն ու ժառանգությանը:

Մեսրոպ Մաշտոց

Թեմայի մեկնաբանման յուրօրինակությամբ աչքի են ընկնում «Անատոլիայի ուրվականը», «Չորս եղանակ», «Քաղաքի ոդիսականը», «Անհիմն քաղաքների ոդիսականը» աշխատանքները՝ աղերսվելով ցեղասպանության թեմային, ներկայացնելով Մեծ եղեռնից փրկված, տնազուրկ մարդկանց կյանքը:

Անատոլիայի ուրվականը

Անհիմն քաղաքների ոդիսականը

Ռաֆֆի Սարգսյանի արվեստին բնորոշ է սինթեզը, որ հիմնականում վերաբերում է շարժմանը՝ հանդես գալով դինամիկայի և ստատիկայի միասնությամբ[1]: Այն դրսևորվում է տերևի (դինամիկա) և բուրգի (ստատիկա, կայունություն) ֆորմաներով արտահայտված մի շարք քանդակներում՝ «Բեթհովեն», «Վերածնունդ», «Մարդ ծառ», «Հովիվն ու խոյերը», «Հիշատակ Լեոնարդո դա Վինչիին», «Աֆրիկացի իմաստուն», «Երգահանների հանդես», «Անատոլիայի ուրվականը» և այլն: Ըստ քանդակագործի՝ արվեստագետները պետք է ունենան ակադեմիական մտածելակերպ և տիրապետեն տեխնիկական ուժեղ հմտությունների:

Բեթհովեն

Մարդ-ծառ

Նրա գեղարվեստական լեզվի կիրառած առանձնահատկությունները բազմազան են: Նոր արտահայտչաձևերի փնտրումները փայլուն դրսևորում են գտնում նաև թղթախմորից (pâte à papier) պատրաստված ծրարի ձև ներկայացնող աշխատանքների մեջ («Քաղաքի բանալիները», «Սպասում», «Ոսկե դար», «Ռամզեսից Շամպոլիոն», «Քայլք դեպի անսահմանություն» և այլն): Վերջիններս, շուրջ 40 աշխատանք, 2003 թ. բրոնզե տարբերակների հետ միասին («Փարիզ. աշխարհի մայրաքաղաք», «Քաղաք-ծրար», «Բնապատկեր-ծրար») ցուցադրվել են Փարիզի Փոստատան թանգարանում: Այդ ծրարներն արվեստագետի յուրօրինակ պատգամներն են՝ իրենց մեջ կրելով հանդուրժողականության և ունիվերսալության ուղերձը:

Քաղաք-ծրար

Փարիզ-աշխարհի մայրաքաղաք

1 **Петрова Л.Е., Шнюкова Р. П., Алмосов Л. И., Минакова О. А.** Художественные средства композиции в изобразительном искусстве, Ставрополь, Изд-во СГПИ, 2011, с. 33.

Սարգսյանի ստեղծագործական աշխարհին ամբողջացնում են նաև ինքնուրույն գեղարվեստական արժեք ներկայացնող գրաֆիկական աշխատանքները՝ ընդլայնելով մեր պատկերացումներն արվեստագետի մասին: Վերջիններս սև-ճերմակի հարաբերումներով, ծավալների նրբին մշակումներով, էքսպրեսիվ, ռիթմիկ գծերով մշակված թերթեր են, նրա մտքի, երևակայական աշխարհի արգասիքը՝ արտահայտելով խոր իմացությունն ու ինքնատիպ մեկնաբանությունը հայ և համաշխարհային արվեստի մասին:

Քանդակագործության դասական սկզբունքներին հարող քանդակներում հայկական շունչը, ազգային ոգին դրսևորվել են ոչ միայն դրանց գաղափարական՝ թեմատիկ ու կերպարային բովանդակության, այլև գեղարվեստական մտածողության, ինքնատիպ արտահայտչալեզվի, ստեղծագործական յուրօրինակ ձեռագրում: Արվեստագետի հոգու հետ խոսող թեմաները մղել են նրան ստեղծելու քանդակների շարք, որոնք աչքի են ընկնում արտահայտչական միջոցների ներդաշնակ ամբողջականությամբ:

Նշելով Րաֆֆի Սարգսյանի ոճի, արտահայտչալեզվի ազգային արմատները՝ ամենևին էլ պետք չէ անտեսել եվրոպական արվեստի իմացությունը: Նրա աշխատանքներն իրենց բնույթով խորապես հայկական լինելով՝ միաժամանակ խոսում են համաշխարհային արվեստի լեզվով և մտնում այդ ընտանիքի մեջ[2]:

Շուշանիկ Գ. Զոհրաբյան– գիտական հետաքրքրությունների բնագավառը՝ հայկական և արևմտաեվրոպական արվեստ: Ուսումնասիրում է հայ նորագույն և ժամանակակից շրջանի արվեստը համաշխարհային արվեստի համատեքստում: Հեղինակ է շուրջ 20 հոդվածների և մեկ մենագրության՝ նվիրված հայ անվանի արվեստագետ Վարդգես Սուրենյանցի գրքային նկարազարդումներին:

Summary

THE CHARACTERISTICS OF RAFFY SARKISSIAN'S ARTWORKS

Shushanik G. Zohrabyan (Paris)

Key words – Raffy Sarkissian, national roots, sculptures, perception, artistic language, letters, symbols.

To understand Raffi Sarkisian's art it is important to consider the matters connected with national thinking and expression of artistic language. The titles of his works remind the meaning of thoughts and emotions invested in them.

There are key themes in Sarkissian's artworks: the individual and society, human being and nature, the Armenian Genocide. Bronze sculptures reveal a

2 Րաֆֆի Սարգսյանի ստեղծագործությունները կարելի է տեսնել Միրեյ Մաթիոյի, Քրիստիան Լակրուայի, Ֆրանսուա Միտերանի, Ռաֆիկ Հարիրիի, Ֆրանսուա Լեոտարի, Ֆրեդերիկ Ֆեյդիի մասնավոր հավաքածուներում:

very spiritual and emotional depth. Branches of trees, plants, roots, leaves, frequently used typical characteristic elements, symbols that help the revelation of image, making an inseparable part of his artistic language. Deeply national sculptures represent the language of the world art, and are a part of this family.

Резюме

ХУДОЖЕСТВЕННЫЕ ОСОБЕННОСТИ ИСКУССТВА РАФФИ САРКИСЯНА

Шушаник Г. Зограбян (Париж)

Ключевые слова – Раффи Саркисян, национальные корни, скульптуры, восприятия, художественный язык, буквы, символы.

Для понимания искусства Раффи Саркисяна ключевыми являются вопросы, связанные с национальным мышленим и выражением языка. Названия его работ уже напоминают смысл мысли и эмоций, вложенных в них.

В искусстве Саркисяна есть ключевые темы: личность и общество, человек и природа, Геноцид армян. Бронзовые скульптуры раскрывают очень духовную и эмоциональную глубину. Ветки деревьев, растения, корни, листья, часто используемые типичные элементы, символы, которые помогают раскрыванию изображения, делая неотъемлемой частью его художественного языка.

Работы Саркисяна глубоко национальны, в то же время они говорят на языке всемирного искусства и входят в состав этой семьи.